600.0311.12.07.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հուլիսի 2017 թվականի №311Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի №221Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը և հաշվի առնելով «ՀՈՒՅՍԻ ՔԱՐԱՎԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2017 թվականի հունիսի 27-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 5-ի «ՀՈՒՅՍԻ ՔԱՐԱՎԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված №9/1-91 թույլտվության գործողության ժամկետը երկարաձգելու մասին» №221Ա որոշմամբ նոր խմբագրությամբ շարադրված ռադիոհաճախականության օգտագործման №0790 թույլտվության պայմանների 4-րդ կետի 2-րդ, 3-րդ և 9-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   «2) բազային ռադիոկայանի տեղադրման վայրը՝ ք. Երևան, Տարոնցու 26/3.».

   «3) բազային ռադիոկայանի տեղադրման վայրի աշխարհագրական կոորդինատները՝ 44E 29′, 40N 09′.».

   «9) անտենայի բարձրությունը երկրի մակերեսից՝ 20 մ.»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
12 հուլիսի 2017թ.
ժամը 16[00]